№ 147 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 14 — 1904 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 14 № 147

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Անտարբեր վերաբերմունք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Արևելագէտների միջազգային XIV կոնգրէսը. Արհամարհված դասակարգ. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Իտալիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԱՆՏԱՐԲԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

—

Մենք ստանում ենք մի շարք դանդատներ այն գեղծումների և զանցառութիւնների մասին, որոնք կատարվում են մեր գիւղական շրջանում։ Այդ դանդատները պարզում են մի բան, որ գիւղական հասարակութիւնը, իբրև գործող մարմին, շատ թոյլ է և կրաւորական։

Այն ժամանակ, երբ ընտրվում են գիւղական գործակալներ, օրինակ տանուտէրներ, դատաւորներ, ջրաբաշխներ, զանազան տեսակի պահապաններ, գիւղական հասարակութիւնը իրան շատ անտարբեր է պահում։ Ենթարկվելով այս ու այն դիտումներով ղեկավարվող անհատների ազդեցութեանը, նա թոյլ է տալիս, որ գիւղական գործերը ընկնեն անարժանների ձեռքը, իսկ յետոյ երբ նա սկսում է տուժել չարաչար կերպով, առաջ է բերում մի շարք դանդատներ, որոնց մեծագոյն մասը արդիւնք է նրա նախկին անհոգ և թեթև վերաբերմունքին դէպի իր գործողների ընտրութիւնը։

Այն ժամանակ, երբ ընտրվում են գիւղական պաշտօնեաները, ոչ ոք չէ մտածում ընդհանուր հասարակական տեսակէտով։ Ուժեղները կամ շահագրգռվածները անց են կացնում այն թեկնածուներին, որոնք նրանց համար ձեռնտու են զանազան դիտումներով, իսկ միւս ընտրողները աշխատում են չը թշնամանալ ոչոքի հետ և իրանց հեռու են պահում ներգործական դերից։ Նրանք համակերպվում են առաջիններին, չը կարծելով թէ մի օր իրանք պէտք է կրեն իրանց վրա սխալ և վատ ընտրութեան ծանր հետևանքները։

Իսկ ապագայում, երբ սխալ ընտրութիւնը սկսում է զոհեր վերցնել, անկասկած այդ զոհերը սկսում են տրտնջալ և երբեմն ամենախիստ կերպով դիմադրել։ Այդտեղ նրանք ներկայանում են իբրև ներգործական դեր կատարել ցանկացողներ, սակայն նրանք անզօր են աջող մաքառում ցոյց տալու և ստիպված են ընկճվել ու հաշտվել իրանց վիճակի հետ։

Գալիս է հետևեալ ընտրութիւնը և նոյն սխալը կրկնվում է անհաշտ փոփոխութիւններով, որովհետև գիւղական կեղեքիչների համար դժուար չէ լռեցնել մասնաւոր դժգոհներին զանազան գիջումներով և խոստումներով։

Անհրաժեշտ է, որ գիւղական հասարակութիւնը սովորի ղեկավարվել իր գործառնութիւնների մէջ գիւղի ընդհանուր շահերի գաղափարով և հալածելով զանցառուներին և գեղծում կատարողներին՝ թոյլ չը տայ, որ նրանք իրանց ձեռքը դցեն գիւղի պաշտօնները և յետոյ աւելի մեծ չափով շարունակեն իրանց վնասակար ազդեցութիւնը գիւղի վրա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Arthur Leist. Das Georgische Volk, Dresden 1904. Արտուր Լայստ. Վրացի ժողովուրդը։ Դրեզդէն 1904 թ.

Ներկայ մատենագրութեան նիւթ կազմող աշխատութիւնը պատկանում է Կովկասին ծանօթ գերմանացի գիտնական Ա. Լայստի գրչին, որ երբեմն հանգուցեալ Արգար Յովհաննիսեանի հրատարակութեամբ գերմաներէն լեզուով լոյս տեսած «Armenische Bibliothek» գրական ժողովածուի բոլոր հատորները խմբագրել է։ Յարգելի հեղինակը պատկանում է գերմանացի այն գրողների դասակարգին, որոնք Գերմանիայում աշխատում են բազմալեզու և բազմացեղ Կովկասը գրականական, պատմական և ազգագրական տեղեկութիւններով իրանց հայրենակիցներին ծանօթացնել։ Նրա ամենավերջին աշխատութիւնը, որ կրում է «Վրացի Ժողովուրդը» վերնագիրը, կազմում է մի պատկառելի հատոր, այս անգամ նուիրված վրացիներին, որոնք իբրև հարևան ժողովուրդ մի քանի դարեր շարունակ հայերի քթի տակն են ապրել, բայց այնուամենայնիւ, չը նայելով այդ հանգամանքին, մենք դժբաղդաբար շատ քիչ տեղեկութիւններ ունենք վրացիների ոչ միայն պատմական անցեալի, այլ և նրանց ժամանակակից կեանքի, գրականութեան, կուլտուրայի և ներկայ վիճակի մասին։ Ա. Լայստի աշխատութիւնը նուիրված է Կովկասին, աւելի ճիշտ՝ նրա մի կտորին, որի վրա գլխաւորապէս ապրում են վրացիները։

Կովկասն ընդհանրապէս և նրա մի խոշոր մասը կազմող Վրաստանը մասնաւորապէս շատ վաղ ժամանակներից ի վեր սկսել են պատմական որոշ դեր կատարել։ Կովկասում ապրող ազգերից շատերը, որոնց շարքում և վրացիները, դեռ Քրիստոսից շատ առաջ, իրանց երկրի աշխարհագրական պայմանների շնորհիւ յարաբերութեան մէջ էին գտնվում հնագարեան մի քանի նշանաւոր ազգերի հետ։

Արգօնաւորդների պատմական տեսակէտից շատ յայտնի արշաւանքը մեզ ժամանցոյց է անում պատմական այն փաստի վրա, որ վրացիները դեռ Ք. Ծ. շատ առաջ յարաբերութեան մէջ են եղել արևմտեան մի քանի ազգերի և ժողովուրդների հետ։ Պատմութիւնից յայտնի է և այն փաստը, որ աշխարհակալ Ասորեստանը և լայնածաւալ Պարսկաստանը իրանց պատմական կեանքի ընթացքում յաճախ հասել և նոյն իսկ անցել են Վրաստանով իրանց յայտնի արշաւանքների ժամանակ։ Ներքանց յաջորդեցին կլասիքական յոյները, որոնք քաղաքական և առևտրական նպատակով բազմաթիւ մեծ ու փոքր գաղթականութիւններ հաստատեցին Սև կամ Պոնտական ծովի ափերում, սերտ յարաբերութիւն սկսեցին վրացիների հետ և ժամանակի ընթացքում նրանց վրա գրոշմեցին իրանց քաղաքակրթական կնիքը։ Յետոյ Մակեդոնիայի հռչակաւոր աշխարհակալ Ալէքսանդր Մեծն արշաւելով դէպի Բակտրիա և Սոկտրիա, ճանապարհին շփվել է վրացիների հետ և այլն։

Վերջապէս աւելորդ ենք համարում այստեղ յիշատակել և պատմական ուրիշ շատ երկրորդական փաստեր էլ, որոնք վկայում են վրացիների և նրանց պատմական վերջին հայրենիք Վրաստանի շատ վաղ ժամանակներից ի վեր ունեցած յարաբերութիւնն ու շփումն հնագարեան նշանաւոր ժողովուրդների հետ։

Հէնց դրա համար էլ Ասիայի և Եւրոպայի մէջ պատմական նշանաւոր կամուրջ կազմող Կովկասը վաղուց իր վրա է դարձրել գիտնական աշխարհի զանազան ժամանակներում խորին ուշադրութիւնը, լինեն այդ մասնագէտները լեզուագէտներ, պատմաբաններ, ազգագրագէտներ, բնագէտներ, ճանապարհորդներ և այլն։ Վերոյիշեալ գիտնականների շնորհիւ Կովկասագիտութեան վերաբերեալ ստեղծվել է մի պատկառելի գրականութիւն, որը դեռ օրեցօր պէտք է հարստանայ գիտական նոր նոր ուսումնասիրութիւններով։

Այդ գիտնականների մեծամասնութեան կարծիքով Կովկասեան բոլոր ազգերն ու ժողովուրդները բաժանվում են երկու գլխաւոր խմբերի՝ հնդո-գերմանական և մոնղոլական ազգեր։ Կովկասի ազգերի առաջին խմբին են պատկանում և վրացիները, որոնցով զբաղվում է և Արտուր Լայստի վերջին «Վրացի Ժողովուրդը» վերնագրով բաւական լուրջ աշխատութիւնը, որ ամբողջապէս նուիրված է վրաց կուլտուրական կեանքի նկարագրութեան սկզբից մինչև մեր օրերը։

Արտուր Լայստը ամենից առաջ նկարագրում է Վրաստանի աշխարհագրական դիրքն ու բնութիւնը, որի ազդեցութեան ներքոյ զարգացել է վրացի ժողովուրդը և վերջապէս որը շնորհել է նրան իր ֆիզիքական և մտաւոր ինքնուրոյնութիւնը։ Հեղինակը մանրամասն կերպով բնորոշում է վրացիների բնաւորութիւնն ու ազգային առանձնայատկութիւնները, գլխաւորապէս հիմնվելով նրանց պատմութեան և իր ունեցած երկարամեայ ծանօթութեան վրա, առաջնորդվելով գերմանացի հանճարեղ փիլիսոփայ և աշխարհահռչակ բանաստեղծ Վ. Գիօթէի այն աշխարհայեցողութեան վրա, որ ասում է. «Die Geschichte eines Volkes ist sein Charakter» (*Մի ժողովուրդի պատմութիւնը նրա բնաւորութիւնն է*)։ Արտուր Լայստը երկար կանգ է առնում վրաց գիւղական կեանքի, զբաղմունքների, սովորութիւնների, վարք ու բարքի, նիստ ու կացի և կենցաղավարութեան վրա։ Նա մի առանձին գլուխ է նուիրում վրացի կանանց, որոնք Կովկասում վաղուց ի վեր հռչակված են իրանց «արտաքոյ կարգի» գեղեցկութեամբ։ Բայց Արտուր Լայստի ուշադրութեան կենտրոնը ծանրանում է գլխաւորապէս վրացիների քաղաքական և կուլտուրական կեանքի զարգացման մանրամասնութիւնների վրա, որը լուսաբանելու համար հեղինակը հասնում է մինչև այդ ժողովրդի ծագմանը և սկզբնաւորութեանը, որը, ինչպէս և ամեն մի ժողովրդի սկզբնաւորութիւնը, ծածկված է թանձր մշուշով և ընդհանրապէս դիցաբանական է։

Ընթերցողի առանձին հետաքրքրութիւնն է շարժում հեղինակի աշխատութեան այն գլուխը, որտեղ ամփոփված է 19-րդ դարի գրականութեան խարակտերիստական և գրական գլխաւոր հոսանքների ստորաբաժանումները։ Հեղինակի աչքից չեն խուսափում և վրաց ճարտարապետութիւնը, թատրոնը և երաժշտութիւնը։

Ամփոփելով մեր ասածները Արտուր Լայստի աշխատութեան մասին՝ մի որոշ եզրակացութեան հասնելու համար, կարող ենք ասել, որ դա մի բաւական լուրջ և բարեխիղճ աշխատութիւն է, որը շատ հետաքրքիր է ոչ միայն գերմանացի, այլ և հայ ընթերցողի համար, որի մինչև այժմ ունեցած տեղեկութիւնները իր հարևան վրացիների մասին շատ խղճուկ ու աննախանձելի են։ Արժէ նոյն իսկ վերոյիշեալ աշխատութիւնը մի քանի աննշան կրճատումներով փոխադրել հայերէն լեզուով։

Լ. Բաբայեան

Թիֆլիս

ԱՐԵՒԵԼԱԳԷՏՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ XIV ԿՈՆԳՐԷՍԸ

—

1903 թ. սեպտեմբեր ամսին Գերմանիայի Համբուրգ ազատ քաղաքում կայացաւ արևելագէտների միջազգային ԺԳ. կոնգրէսը, որի գիտական զբաղմունքների մասին մենք ժամանակին մանրամասն կերպով հաղորդեցինք «Մշակի» ընթերցողներին։ Այդ ժողովում կոնգրէսին մասնակցող անդամների ձայների մեծամասնութեամբ վճռվեց առաջիկայ ժողովը գումարել Ալժիրում, չը նայելով որ նրանց մի զգալի մասը կողմակից էր Եապոնիայի Տօկիօ մայրաքաղաքում կայանալու մտքին։ Կոնգրէսը կը կայանայ 1905 թ. ապրիլ ամսին Ալժիրում։ Կոնգրէսի գիտական զբաղմունքները բաժանված կը լինեն հօթն առանձին-առանձին սեկցիաների, որոնք հետևեալներն են. ա) Հնդկաստան, արիական լեզուներ և հնդկական լեզու։ Բ) Սեմիտական լեզուներ։ Գ) Մահմեդական լեզուներ։ Դ) Եգիպտոս, աֆրիկական լեզուներ։ Ե) Հեռաւոր Արևելք։ Զ) Յունաստան և արևելք. Է) Աֆրիկական հնախօսութիւն և մահմեդական գեղարուեստ։

Արևելագէտների ԺԴ. միջազգային կոնգրէսը պէտք է զբաղվի ոչ միայն զուտ լեզուագիտական հարցերով, այլ և արևելեան ազգերի աշխարհագրութեան, պատմութեան և սոցիօլոգիային վերաբերեալ ամեն տեսակ հաղորդագրութիւններով և զեկուցումներով։ Կոնգրէսի վերաբերեալ ամեն տեսակ տեղեկութիւններ ստանալու համար պէտք է դիմել Ալժիրում Արևելագէտների կոնգրէսի կազմակերպող վարչութեան հետևեալ հասցէով. (Secrétariat de la Commission d'organisation 46, rue d'Isly, «Service des Affaires indigènes»)։

Շատ ցանկալի էր, որ այս անգամ աւելի մեծ թիւով հայ արևելագէտներ մասնակցէին Ալժիրի կոնգրէսին հայագիտութեան վերաբերող իրանց գիտնական ուսումնասիրութիւններով։

ԱՐՀԱՄԱՐՀՎԱԾ ԴԱՍԱԿԱՐԳ

(Նամակ Երևանից)

—

Գուցէ չը կայ մի այլ դասակարգ, որը իրան զգար այնքան արհամարհված, որքան գործակատարների այդ լուռ տանջվող դասակարգը։ Եւ գուցէ շատերին տարօրինակ թուայ մեր այս համեմատութիւնը մի դասակարգի նկատմամբ, որը ըստ երևոյթին, արտաքին կեղևով բոլորովին այլ կերպարանք է կրում։ Եւ իսկապէս գործակատարը իր արտաքին տպաւորութիւններով անհամեմատ բարձր վիճակի մէջ է երևում, քան միւս դասակարգերը։ Համեմատեցէք գործակատարի հագուստը բանուորի, արհեստաւոր մշակի հագուստի հետ, համեմատեցէք գործակատարի ծառայատեղին, նրանում տիրող արտաքին ձևերը, քաղաքավարական կանոնները—գործարանի կամ մի սովորական արհեստանոցի մէջ տիրող կարգերի հետ. այդ մակերևոյթային համեմատութիւնը, ճիշդ է, բոլորովին այլ բան ցոյց կը տայ ձեզ, բայց մի բօպէ մտէք ներքին աշխարհը, այդ արտաքինով փայլուն դասակարգի հոգեբանութեան մէջ, այն ժամանակ կը տեսնէք, թէ որչափ արհամարհված է զգում իրան մի դասակարգ, որը դժբաղդութիւն ունի մտաւորապէս մի փոքր բարձր կանգնած լինել։

Ոչոքի համար գաղտնի չէ, որ մեր երիտասարդ լաւ ոյժերը մտնում են գործակատար դասակարգի մէջ, որ դպրոցաւարտ երիտասարդութիւնը, նոյն իսկ բազմաթիւ ուսուցիչներ բաղդ որոնեցին գործակատարութեան մէջ։ Մեր ամենաթարմ, եռուն և շատ ու քիչ կրթված, բայց բաղդի դառն հալածանքներին ենթարկված երիտասարդութեան համար մի ասպարէզ միայն բաց է եղել, բազազի խանութը, «կուպեցի» կրպակը և թէկուզ խմիչքների վաճառատեղին, և դառը իրականութիւնը բերել է շատ ու շատ իդէալական հոգիներ, լաւ ձգտումների տէր երիտասարդներ դրել է մի մթնոլորտի մէջ, որտեղ նրանք իրանց զգացել են փշի վրա նստած, մի խորթ, անսովոր մթնոլորտի դատապարտված։

Այժմեան պայմաններում շատ ու շատ գործակատարներ անհամեմատ թէ մտաւորապէս և թէ բարոյապէս աւելի բարձր են կանգնած քան խազէյինները, յաճախ զգում էք, որ դուք որպէս մարդ ձեր խազէյնից շատ առաւել էք, բայց այն հանգամանքը, որը ստեղծել է մի կոմիկ դրութիւն, որ իր դրամի, իր խազէյնական իրաւունքների շնորհիւ մի սովորական վաճառական դարձել է հրամայող, կարգադրող ձեր ժամերի, ձեր պարապմունքների, ինչպէս կը թելադրէ նրա կամքը, քմահաճոյքը։ Ահա այս դրութիւնը առաջ է բերել հակակրանքի ու արհամարհանքի մի զգացմունք, որը կրկնվում է ամեն անգամ, որքան առիթ է լինում հանդիպելու ձեզ ձեր խազէյնի հետ։

Իսկ դուք գիտէք ինչ կը նշանակէ հայ խազէյին. նա համոզված է, որ ձեզ եթէ իր խանութում պահում է, մի բարեգործութիւն է անում, որ ձեզ ապրեցնողը, ձեր ընտանիքին մի կտոր հաց տուողն ինքն է. նա համոզված է, որ ինքն ու իր խանութը եթէ չը լինէին, դուք սոված կը մնայիք, և ահա այդ համոզ-

ժունքը իրաւունք է տալիս նրան չը քաշվել մինչև անգամ հայհոյել ձեզ, և եթէ ձեզ էլ չէ, ձեր ընկերին, ձեր փոքր ծառայակցին ձեր ներկայութեամբ, որը հաւասար չափով վիրաւորում է և ձեր ինքնասիրութիւնը։

Այսպէս՝ Երևանի գործակատարների մէջ միտք ծագեց իրանց դրութիւնը բարւոքելու նպատակով, թէկուզ սկզբում խանութները բանալու և կողպելու նկատմամբ, դիմել քաղաքային խորհրդին՝ հարցը լուծելու օրինաւոր ճանապարհով։ Ներկայ քաղաքագլուխը անձնականապէս շատ համակրանքով վերաբերվեց այդ հարցին. խնդիրը լուծված պէտք էր համարել, բայց ով զարմանք, գործակատարների ներկայացրած բազմաստորագիր խնդիրը անյայտացաւ խորհրդի թղթերի միջից և թերևս այս մի միջոց համարվեց հարցը խափանելու համար։ Թէպէտ նորից գրվեց մի այլ խնդիր և ներկայացվեց առաջինի կարգով։

Ահա, այսպիսի անմեղ երևոյթը, օրինաւոր դիմումն անգամ մի քանի խաղէյինների կողմից ծաղրի և արհամարհանքի առիթներ ներկայացան։

Արդեօք այս բոլորը բաւական չէ՞ն ասելու, որ գործակատարը արհամարհված է և արհամարհված անարդար կերպով։

Ա—Դօ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Արդուին, յունիսի 9-ին

«Մշակի» № 27-ի մէջ տպված իմ յօդուածի առիթով Մ. Աստուածատրեանց և Կ. Մալխասեան քահանաները՝ աշխատել են «Մշակի» 73 և 109 համարներում լոյս տեսած իրանց նամակներով հերքել իմ գրածը միայն բառերով։ Նրանք լաւ են իմանում, որ 13 տարեկան վատոյժ, ամուսնական պարտաւորութիւնը կատարելու դեռ անընդունակ գտնվող օրիորդ Յուդիտա Բասմաջեանի պակը դատապարտված է Արդուինի ամբողջ ազգաբնակութեան կողմից, սակայն գործին անծանօթ ընթերցողների առաջ իրանք իրանց մի կերպ արդարացնելու համար փորձում են բանաձևերով աքօղել իրողութիւնը։

Այդ գործում Աստուածատրեան քահանան սկզբում այսպիսի դիրք բռնեց. արտաքուստ իբր ինձ հետ համաձայն էր յիշեալ օրիորդի պակը մերժելու ինքը ևս խոստովանելով, թէ «նրան պակ չի հանի, շատ փոքր է». սակայն յետոյ նկատվեց, որ լռելեայն թելադրում, քաջալերում էր պակվող տղայի հօրը (որին ես համոզել էի յետ կենալ այդ ցաւաբեր ցանկութիւնից) և նրան շրջապատողներին գործը առաջ տանել, որոնցից մինը Պետրոս Գրիգ. Ազնաւորեանցը, Մկրտիչ քահանայի խորհրդով, գալով ինձ մօտ 25 բուբլի առաջարկեց ինձ, որպէս զի թոյլատրեմ ծխատէր յիշեալ քահանային պակը կատարելու։ Աստուածատրեան քահանայի այս քայլերը դիտելուց ու հետևանքը պատկերացնելուց յետոյ՝ ես խոհեմութիւն համարեցի խնդիրը յանձնել կօնսիստորիայի տնօրէնութեանը և պատրաստելով յունվար 3-ի № 1 յայտարարութիւնը՝ բաց կերպով յանձնեցի պակատիրոջ, որը մի բուբլով միասին նրա ձեռքով ներկայացվեց կօնսիստորին, պատասխանը ստանալու համար։ Բայց սակայն չը սպասելով կօնսիստորիայի կարգադրութեանը՝ ծխատէր Աստուածատրեան և Մալխասեան քահանաների մէջ փոխանակված հեռագիրների, նամակների շնորհիւ, յունվարի 16-ին վերցրին տղային ու աղջկան և իսկոյն տարան Բաթում, ուր հէնց նոյն երեկոյեան, գիշերով կատարվեց նրանց պակը և վերադարձան 18-ին. իսկ ես կօնսիստորիայի թոյլատրութիւնը ստացայ յունվարի 23-ի № 9742 հեռագրով։ Բայց Աստուածատրեան քահանան այս առիթով ասել էր իր նամակում («Մշակ», № 73) «Խորհրդապահ գործակալը ստացաւ կօնսիստորիայից պակվելու իրաւունքը, բայց թագցրեց ինձանից, իսկ պակվողների համբերութիւնները (փոխանակ ասելու իր համբերութիւնը) հատնելով, կրկնապատիկ ծախսեր անելով՝ գնացին Բաթում և պակվեցին»։ Նոյնպէս և ստել էր մեր պատրաստած տեղական կանոնները, որի 1 յօդուածի մէջ գրած ենք դեռ միայն նշանվողների մասին, «... բընութեան և աստուածային օրէնքի համաձայն՝ տղան տասն ութից մինչև քսան և աղջիկը առնուազը տասն երեք ու կէս տարեկան պիտի լինեն»։ Այս կանոնները պատրաստելով 1899 թվի յունվարի 1-ին, տարեմուտի օրը եկեղեցում, Աստուածատրեան քահանայի ներկայութեամբ, կարդալով (մինչև այսօր էլ սովորութիւն ենք արած ամեն տարի կարդալ այդ կանոնագիրը եկեղեցում) խիստ կերպով արգելեցինք տեղական մի շարք տգեղ, ժողովրդին մտտեսապէս քայքայող, աղքատացնող սովորութիւնները, և ամսի երկուսին էլ ես ինքս անձամբ շրջելով բոլոր նշանված տղաների ու աղջիկների տները՝ մէկից միւսին տարեմուտի առիթով ուղարկված «ակնելիքները» (ընծաներ) ամանները, որոնք փոխադարձաբար լիք լիք պիտի վերադարձվէին աղջիկների կողմից ևս, հանդիսատես Աստուածատրեան քահանայի աչքերի առաջ, բոլոր ամանները իմ ձեռքով պարապ յետ եմ վերադարձրել լիք լիք ուղարկող և փոխարէնը ակնկալող տղաներին. և ահա այն օրից մինչև այսօր էլ անխախտ պահպանվում է մեր այս կարգադրութիւնը ամբողջ ժողովրդի մէջ։

(Կը շարունակվի)

ՆԵՐԿԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Զեխովի ահագին թիւ համակրողների մէջ Մոսկվայում միտք է յղացել սիրելի հանգուցեալների վրա այլ ևս թանգագին պակներ չը դնել, այլ բաւականանալ լոկ դափնէ և ծաղկէ պակներով, իսկ մնացած խնայողութիւնը հաւաքել և կազմել հանգուցեալ գրողի յիշատակին մի ֆոնդ։

—

Թիֆլիսի գործադիր-սանիտարական յանձնաժողովը պաշտօնապէս յայտնել է Ջրաղացատէր պ. Պապկովին, որ եթէ 10 օրում Վանքի մայր եկեղեցու պարսպի մօտ եղած Կուր գետի փոքր բազուկի առաջ քաշած պատը չը վերցնէ և նրա փոխարէն շարժական փականք չը շինէ, այն ժամանակ քաղաքային վարչութիւնն ստիպված կը լինի պարոնի հաշուով ինքը շինել այդ բանը։ Միւս կողմից՝ քաղաքային վարչութիւնն սկսել է արդէն եռանդով մաքրել Կուրի ափերի և քաղաքի ձորակների մէջ եղած կեղտոտութիւնները։

—

Բժշկապետ Ա. Բուդուղեան շարունակում է իր ժողովրդականացրած աշխատութիւնների հրատարակութիւնը։ Մենք ստացանք նրա 30-րդ գրքոյկը «Գոյութեան կռիւ», որ տպված է Պետերբուրգում, «Պուշկինեան» տպարանում։ Այս անգամ հեղինակը ընտրել է դարձեալ մի շատ հետաքրքիր և ժամանակակից նիւթ, որի մասին, առհասարակ, մեր գրականութեան մէջ քիչ տեղեկութիւններ կան։ Գինն է 20 կոպէկ։

—

Մենք ստացանք «La Revue des Idées» ֆրանսիական ամսագրի յուլիսի համարը, որ պարունակում է հետևեալ գլխաւոր յօդուածները. 1) Ե. Մարէյ, նշանաւոր ֆիզիօլոգ E. S. Marey, par M. René-Quinton. 2) Յուդայականութեան երկրորդ դարեշրջանը, La Seconde époque du Judaisme. par M. Eduard Dujardin. 5) Փոփոխութիւն և բարեշրջումն Variation et Evolution, par M. Georges Bohn. 4) Ծանօթութիւններ և վերլուծումներ Notes et Analyses. 5) Քրօնիկոն Chronique։ Հետաքրքրական է Յուդայականութեան մասին յօդուածը, որ նոր լուսաբանութիւններով երևան է հանում հրէական ազգի վիճակը մակեդոնական տիրապետութեան ժամանակ և Պալեստինի յարաբերութիւնները յունական կուլտուրայի հետ։ Առհասարակ այս ամսագիրը շահագրգիռ է նրանց համար, որոնք զբաղվում են զուտ գիտութեամբ։

—

Թիֆլիսի «Հերմէս» տպարանից լոյս տեսաւ «Բանաստեղծութիւններ» վերնագրով ոտանաւորների առաջին հատորը. հեղինակն է Խաչատուր Բաբայեան։ Այս 28-րդ գիրքն է, որ ներկայ տարվայ յունվար ամսից հրատարակվում է «Հերմէս» նորահաստատ ընկերութեան տպարանից։ Գրքի արտաքինը գեղեցիկ է, մաքուր, իսկ ներքին արժանաւորութեան մասին կաշխատենք առանձին խօսել։ Գինն է 50 կոպէկ։

—

„Нов.“ լրագիրը հաղորդում է, որ մօտ օրերս Պետերբուրգից Աբասթուման են ուղարկվելու հանգուցեալ Մեծ-Իշխան Թագաժառանգ Գէօրգի Ալէքսանդրովիչի յիշատակի համար շինվելիք մատուռի մասերը։

—

„Сѣв.-Зап. Кр.“ լրագիրը հաղորդում է, որ պատերազմի պատճառով Կիեվի առևտրական և արդիւնաբերական աշխարհի բոլոր մասերում տիրում է անգործութիւն, անշարժութիւն։ Այդպիսի անշարժութիւն վաղուց չէր տեսնվել առևտրական և արդիւնագործական աշխարհում։ Տեղական առևտրականներն իրար ետևից «էժանացրած վաճառումներ» են յայտարարում, որ գոնէ մի քիչ գործերը կենդանանեն։ Այդ անգործութիւնից առաջանում են բազմաթիւ մանկութիւններ։ Վերջին օրերս Կիեվի պաստառավաճառների 3 ֆիրմաներ, մէկ ալիւրավաճառ, մի բանկային գրասենեակ, երկրագործական մեքենաների մի մեծ վաճառատուն (մօտ 200,000 բացով), անուշեղէնների մի գործարան (մօտ 80,000 ր. բացով), երկու գալանտէրէական առևտրական տներ և մի մեծ փայտավաճառ մանկացել են և գործերն ու վճարումները դադարեցրել։

—

„Турк. Вѣд.“ լրագրին հաղորդում են Անդիժանից, որ յուլիսի 2-ին Միր-Պուստան աւանում՝ Անդիժանի մօտերը, խոհարարների և տեղացի ծառաների միտինգ է գումարվել։ Բացի ծառաներից՝ հաւաքվել էին և մօտ 300 հոգի տեղացիներ։ Միտինգը շատ խաղաղ ու կանոնաւոր անցաւ։ Ընտրվեց ծառաներից մի «աղսախկալ», որը պէտք է լինի Անդիժանի ռուս ազգաբնակութեան մօտ ծառայող բոլոր խոհարարների և լաքէյների աւագը և հսկէ ու հոգ տանի նրանց վրա։ Մշակվեցին կանոններ ծառաներին անգործութեան ժամանակ օժանդակութիւն և օգնութիւն ցոյց տալու համար։ Բոլոր բնակիչներն այդ օրն անճաշ մնացին, որովհետև կերակուր եփող չը կար։

—

„Сѣв.-Зам. Кр.“ լրագիրը գրում է. «Մինսկի և նրա գաւառների մէջ տիրող խիստ զգալի անգործութեան պատճառով, զեմստվոյի գործերի նահանգական վարչութիւնը վճռել է հրաւիրել նահանգական կոմիտէի արտակարգ ժողով և առաջարկել, որ մի քանի անհրաժեշտ հասարակական աշխատանքներ, որոնց ձեռնարկութիւնը յետաձգված էր զանազան պատճառներով՝ այս տարի և եթ սկսվեն, անգործ ազգաբնակութեանը գտնել մի քիչ գործ մատակարարելու նպատակով։

—

„Варш. Днев.“ լրագիրը հաղորդում է, որ Վարշաւայի հրէաները հռչակաւոր հրապարակախօս և սիօնիստ Հէրցէլի մահվան առիթով բաւական մեծ ցոյց են արել քաղաքի փողոցներով։ Հանգուցեալի պատկերը, սև քողով ծածկված, մատ են ածել փողոցներով՝ շրջապատված ահագին ամբոխով։ Ոստիկանութիւնը մէջ է խառնվել և կարգը վերականգնել է։

—

Մի այրի խեղճ կին, Մարգարիտ Յարութիւնեան, որ ապրում է Զուղուրէթում, Պանասեվիչի փողոցում (№ 16 տուն Տուրիեվի), գտնվելով անօգնական վիճակի մէջ, խնդրում է բարեգործ անձանց օգնել իրան։ (Տեղական ոստիկանութիւնը թոյլ է տուել նրան լրագրի միջոցով նպաստներ ժողովելու։ № 2653 յուլիսի 1)։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Յուլիսի 6-ին, Մ. Խանդամիրեանի դահլիճում հայ դերասանները ղեկավարութեամբ Յ. Աբէլեանի, ներկայացրին Իբսէնի «Դոկտոր Շտոկման» դրաման 5 գործ.։ Հասարակութիւնը ծայրէ ի ծայր լցրել էր դահլիճը։ Եւ հաճելի էր տեսնել, երբ այդպիսի մի դրամայի ներկայացումը անհետևանք չէ անցնում, այլ հասարակութիւն է գրաւում, որը ոգևորութեամբ էր ընդունում դերասանների խաղը։ Գլխաւոր դերակատարներ—Դոկտոր և Պետէր Շտոկմանները (Աբէլեան և Զարիֆեան) իրանց դերերումն էին։ Մանաւանդ մեզ դուր եկաւ պ. Զարիֆեանի խաղը։ Մնացած դերակատարները մի կերպ «եօլա» տարան։ Ափսոս, որ քաղաքային ինքնավարութեան ձայնաւորներից համարեա ոչ ոք չը կար երէկ, մինչդեռ նրանց ներկայութիւնը մինքան անհրաժեշտ էր»...

—

Զանգեզուրի գաւառի ՂԱԹԱՐԻ հանքից մեզ գրում են. «Ղափան-Բարկուշատի մահալի, Զանգեզուրի գաւառի, Գիւտգիւմ, Բառաբաթում, Գաւարտ և մի քանի ուրիշ գիւղերի անասունները վարակված են «Դարաղ» կոչված վարակիչ հիւանդութիւնով։ Դարաղ անուանեալ վարակիչ հիւանդութիւնը լինում է երեք տեսակ. մէկը՝ բերանից, երբ անասունը ոչինչ ուտել չէ կարողանում, միւսը՝ ոտներից՝ երբ գնալ չէ կարողանում, իսկ երրորդը՝ կովերի ծծերից, երբ կովերը կաթը չեն տալիս. առողջանալուց շատ կովերի ծծերը փչանում են և էլ կաթը չեն տալիս։ Եթէ այս վարակիչ հիւանդութիւնը երկար շարունակվի, այն ժամանակ շատ գիւղերի անասունները կը վարակվեն»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Գարնան յորդ անձրևների ազդեցութեան տակ սկզբում ժողովուրդը հրճվում էր ցանքերի տեսքից, որ խոստանում էր արգասաւոր արդիւնք ունենալ։ Բայց վերջին օրերի երաշտից շատերը երկիւղ յայտնեցին, որ արտերի մակերևոյթը սաստիկ կարծրացել է, հետևապէս բուսականութիւնը չէ զարգանում, ուստի կրկին անձրևի կարիք էր զգացվում։ Բարեբաղդաբար անցեալ օր մի փոքր անձրև տեղաց և ժողովրդի նեղութիւնը փարատվեց։ Սակայն, դժբաղդաբար դաշտային մկները արդէն այժմեանից սկսել են իրանց արշաւանքը, կտրելով թէ խոտը և թէ հացաբոյսը, չը նայած, որ բուսականութիւնը դեռ ևս կանաչ դրութեան մէջ է»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Մօդուլինեան լեռնանցքի մօտ կռիւը։ «Berl. Lokalanz.» լրագրի Թղթակիցը Կուրօկիի գլխաւոր բանակատեղիում հաղորդում է, որ Մօդուլինեան լեռնանցքի մօտ եղած կռիւն մասնակցել են 20,000 ռուսներ և ռուսները նահանջումը կատարեցին հիանալի կարգով։ Նոյն լրագրին հաղորդում են Լօնդօնից, որ Կ. Պոլսից ստացված տեղեկութիւնների համաձայն, Դարդանէլից անցաւ ռուսաց «Զէրնօմօրեց» կրեյսերը։ (Р. А.)

Որտեղ է գտնվում Տօգօի էսկադրան։ Լօնդօնից հաղորդում են, որ շատ տարակուսանքներից և ենթադրութիւններից յետոյ այն մասին, թէ որտեղ է գտնվում ծովապետ Տօգօի էսկադրան այժմ իմացել են, որ նա խարիսխ է ձգել Հիւսիսային կղզու և Տօրնտօն նաւահանգստի մէջտեղ կօրէական ծոցում, 100 մղոն հեռու Պօրտ-Արտուրից։ (Н. В.)

Անգլիական կրիտիկոսների կարծիքը։ Լօնդօնից հեռագրում են, որ անգլիական պատերազմական քննադատները նշանաւոր են համարում Մօտիէնլինեան լեռնանցքի վրա ռուսների գործած յարձակումը և տեսնում են դրա մէջ պատերազմի բախտի փոփոխութիւնը։ Այս յարձակումը վկայում է, որ ռուսները ստացել են բաւականաչափ աշակից զօրքեր արշաւողական գործողութիւններ սկսելու համար, և որ Կուրոպատկինը վճռել է արդէն գործել արշաւողաբար։ Մինչև այժմ յարձակողական դիրք էին բռնել եապօնացիները, յարմարվելով սեփական պլաններին, այժմ նրանք պէտք է հաշուի առնեն և հակառակորդի պլանները։ Նրանք սովորել են արշաւելու, ինչպէս կամենում էին, ուստի և նրանց յուզում է այն, որ ռուսները կրաւորական պաշտպանութիւնից արագաբար անցել են ներգործական գործունէութեան։ «Standard» ենթադրում է, որ վերջին ժամանակներս Կուրոպատկինը ուժեղացել է 30, եթէ ոչ 60 հազար նոր զօրքով։ Այդ նոր զօրքերը, հաւանօրէն, դասաւորված են Լեաօեանից դէպի հիւսիս։ Ենթադրում են, որ Կուրոպատկինը բոլորովին ապահովված է եապօնացիների յարձակումից և օտարոտի են գտնում, որ եապօնացիները նոյն իսկ չը փորձեցին լրջօրէն յարձակվել երկաթուղու վրա։ Իր քննութեան վերջում, քննադատը եզրակացնում է, որ անկողմնակալ դիտողը չէ կարող կասկածել, որ ռուսների ռազմագիտական դրութիւնը վերջերս չափազանց լաւացել է։ (Нов. В.)

Կարո՞ղ են ռուսները շուտով ճնշող ոյժեր կենտրոնացնել։ Լօնդօնից հեռագրում են Վիէննայի «Zeit» թերթին. «Այն կարծիքը, թէ իբր Ռուսաստանը կարող կը լինի մի քանի ամսից յետոյ ժողովել պատերազմի բեմի վրա ճնշող ոյժ, քիչ հաւանական է։ Նոյն իսկ եթէ Ռուսաստանը փորձ արած լինէր բերել Մանջուրիա մի միլիոն զօրք, որը գրեթէ անհնարին է ուտեստային և սանիտարական դժուարութիւնների պատճառով, դարձեալ Եապօնիան կարող կը լինի ռուսների առաջ բերած զօրքերի թիւն ինքն ևս հանել։ Դեռ ոչ մի բոպէ մինչև այսօր եապօնական զօրքերի զինակոչութիւնը չէ դադարել և նա կը շարունակվի այնքան, որչափ Մանջուրիայում պէտք կունենան աշակից զօրքերի։ Եապօնիան 40 միլիոն ժողովուրդ ունի և նրա մէջ 7 միլիոնը ընդունակ է զինուորականութեան։ Եթէ այդ թիւ կէսը անպէտք լինի դրսի կռիւ համար, դարձեալ Եապօնիան կարող է, հարկաւոր դէպքում, դուրս հանել 3 միլիոն զօրք։ Ի հարկէ, այդ միջոցին կը դիմեն, եթէ թշնամին յարձակվի իր՝ Եապօնիայի վրա։ Այդպիսի յարձակման դէմ միջոցներ են ձեռք առնված և Եապօնիան միշտ կարող է դաշտ ուղարկել 1,250,000 զօրք։ Եթէ նոյն իսկ ընդունենք, որ տարվայ վերջին կորուստը—հիւանդ, սպանված, վիրաւոր—հասնի 250 հազարի, դարձեալ Եապօնիան կունենայ 1 միլիոն զօրք։ (Рус. Вѣд.)

Պors-Արտուրի պաշարման մասին։ Լօնդօնում ստացված տեղեկութիւնների համաձայն, եապօնական «Ժիժի-Շիմպօ» լրագրի պատերազմական քննադատը յայտնում է, որ Պօրտ-Արտուրի պաշարումը մեծ աջողութիւններ է գործում և շուտով տեղի կունենայ բերդի առումը։ Ռուսները, ճշմարիտ, կառուցել են շատ նոր ամրութիւններ և պաշտպանում են բերդը յուսահատաբար, բայց, եապօնական լրագրի

կարծիքով, պաշտպանութեան գործը աւելի և աւելի դժուարանում է և եապօնացիները պէտք է յաղթեն։ Սակայն,—նկատում է ապա լրագիրը,—բացի մշտական զօրեղ ամրութիւններից, կառուցել է շատ ժամանակաւոր ամրութիւններ և նրա զօրքը կազմում է եւրոպական զօրքերի ծաղիկը Ռուսաստանում։ Պորտ-Արթուրի յաղթութիւնը և առումը կը լինի այնպիսի մի դէպք, որ դարեշրջան կը կազմէ պատմութեան մէջ։

Բերելով այս քաղուածքը. «N. Fr. Presse» նկատողութիւն է անում, որ իբր թէ Սակսելի հրամանատարութեան ներքոյ գտնվող եւրոպական զօրքերի մասին տեղեկութիւնը բոլորովին ճիշդ չէ։ Պորտ-Արթուրի պահակազօրքը բաղկացած է երկու արևելեան-սիբիրեան դիվիզիաներից և արևելեան-սիբիրեան սապէօրային 3-րդ բատալիոնից։ (С. П. Вѣд.)

Ցոյսեր Բալտիկեան էսկադրայի վրա։ Գենեռալ Բոտեանով գրում է «Рус. Инв.» լրագրի մէջ. «Պորտ-Արթուրի պաշարումը յիշեցնում է մեզ Սեվաստոպոլի պաշարումը։ Այն ժամանակ, մենք ամենքս այն գիտակցութիւնն ունէինք, որ պէտք է մեռնենք, պաշտպանելով հայրենի քաղաքը. մենք ամենքս իմանում էինք, որ այդպէս մտածում էր և ամբողջ Ռուսաստանը, որը հոգով և մարմնով մեզ հետ էր։ Այդպիսի վիճակի մէջ են գտնվում այսօր և Պորտ-Արթուրի փառաւոր պաշտպանները։ Նրանց երջանիկ բաժին է ընկել պաշտպանել մեր նեցուկը Հեռաւոր-Արևելքում և, պաշտպանելով, մեռնել հաւատով, որ իրանց կը փոխարինեն ուրիշները։ Ինչպէս պաշարված Սեվաստոպոլի օգնութեան գնում էր բանակը, նոյնպէս այժմ Պորտ-Արթուրի պահակազօրքի և նաւատորմի փրկութեան համար պատրաստվում է Բալտիկեան էսկադրան, որին վիճակված է նախանձելի և վեհ պաշտօն, ոչ միայն ազատել ընկերներին, այլ և վերջ դնել Եապոնիայի կողմից յանդգնաբար մեր ուսին բարձած պատերազմին։ Ամբողջ Ռուսաստանը լարված ուշադրութեամբ սպասում է այն ուրախ օրվան, երբ էսկադրան պատրաստ կը լինի և հաստատ համոզված է, որ այդ օրը հեռու չէ։»

ՆԱՄԱԿ ԻՏԱԼԻԱՑԻՑ

Հռոմ, յուլիսի 12-ին

Վատիկանում

(Պիոս X, կարդինալներ Գոտի և Մերրի-դել-Վալ)

Երէկ, յունիսի 11-ին, գեր. Գոյունեանի ընկերութեամբ գնացի պրոպագանդա, ներկայանալու պրոպագանդայի նախագահ կարդինալ Գոտիին։ Պրոպագանդայի շէնքը Վատիկանի մէջ չէ, այլ քաղաքի կենտրօնում սպանիական կոչված հրապարակի վրա (piazza di Spagna), ուր Պիոս IX կանգնել է մի մեծ կոթող ի յիշատակ Աստուածածնի անարատ յղութեան։ Պրոպագանդայի (Collegio di Propagande Fide) կամ «Հաւատոյ Տարածման Ժողովի» շէնքի մէջն է նաև Ուրբանեան կօլլէժը, ուր սովորում են աշխարհիս ամեն կողմից եկած, ամեն ազգի աշակերտներ, որոնք պատրաստվում են եկեղեցականութեան։ Պրոպագանդան Հռոմի եկեղեցու վարչական կազմակերպութեան մէջ առանձին դեր է կատարում, որովհետև բոլոր ոչ-լատին կաթոլիկների գործերը կենտրօնանում են այստեղ։ Պրոպագանդայի նախագահը՝ պապից յետոյ ամենաբարձր դիրքն ունի կաթոլիկ եկեղեցու մէջ և սովորաբար papa rosso (կարմիր պապ) է կոչվում, որովհետև բուն պապն ինքը սպիտակ է հագնվում, իսկ պրոպագանդայի նախագահը՝ կարմիր, իբրև կարդինալ։

Բաւական անուշք 2—3 սանդուղքներից բարձրանալով, մտնում ենք մի քարտուղարի սենեակը, որ նշանակում է մեր ով լինելը և յայտնում մի ուրիշ քարտուղարի և սա էլ զեկուցանում է կարդինալին։ Մեզ առաջնորդեցին նախ մի պարզ սենեակ, ուր կարմիր սեղանի վրա դրված էր խաչելութիւնը և նրա առջև էլ կարմիր, կարդինալական գլխարկը։

Այդ սենեակում մեզանից առաջ եկել և սպասում էին 2 եպիսկոպոս և կաթոլիկ մարոնիտների այստեղի մեծաւորը։ Սրանք պէտք է մեզանից առաջ տեսնվէին կարդինալի հետ։ Երբ մարոնիտ հոգևորականը մտել էր կաբինէտ, ահա մի օտար կարդինալ եկաւ ներս—կարդինալ Աեուտտի, Մադրիդի նախկին նունցիան, և ուղղակի գնաց Գոտիի մօտ։ Սպասեցինք, որ սա էլ վերջացնէ իր տեսակցութիւնը, որպէս զի մենք մտնենք։ Վերջապէս միայն 1 ժամ սպասելուց յետոյ, ներսից քարտուղարը եկաւ մեզ մօտ և հրաւիրեց։ Գոտիի կաբինէտը։ Մենք անցանք 2 շքեղ դահլիճներով, ամբողջովին կարմիր թաւիշով պատած, որոնց մէկը յատկացրած էր նոյնպէս կարդինալների խորհրդի համար, ինչպէս էր Մերրի դել Վալի մօտ։ Պրոպագանդայի գործերի վերաբերեալ կարդինալական խորհուրդը (congregazione) այստեղ էր իր նիստերը կայացնում։

Երրորդ սենեակը կարդինալ Գոտիի դահլիճն էր, մի ընդարձակ լուսաւոր սենեակ, շքեղօրէն կահաւորված, ուր թաւիշը կանաչ գոյն ունէր։—Կարդինալ Գոտին, երկարհասակ, առոյգ և ուրախ դէմքով մի ծերունի, մինչև սենեակի կէսը ընդառաջ եկաւ մեզ։ Գեր. Գոյունեան ներկայացրեց ինձ և մենք գրաւեցինք «կարմիր պապի» աջ ու ձախ կողմերը։ Այստեղ էլ կէս ժամի չափ տևեց մեր խօսակցութիւնը. այս անգամ Գոյունեան վարդապետը, իմ հաւանութեամբ, ներկայ էր մեր տեսակցութեան,—իբրև ներկայացուցիչ հայ կաթոլիկաց պատրիարքարանի։ Խնդիրը վերաբերում էր մի քանի՞ լատին կամ լատինածէս քահանաների վարմունքին, որոնք Կովկասի կաթոլիկ ժողովրդի մէջ որոմն են ցանում, աշխատելով գրաւել դէպի լատինականութիւն կամ առաւելութիւն են տալիս լատինածէսներին և այլն։

Իմ բացատրութիւնները լսելուց յետոյ կարդինալ Գոտի շատ վճռական կերպով յայտնեց, թէ այդպիսի վարմունք բացարձակապէս հակառակ է Ս. Աթոռի տուած հրահանգներին։ «Արևելեան ծէսը» և առանձնապէս հայկական ծէսը և լեզուն, ասաց նա, յարգելի են և յարգված են մեզանից—(respectable et respecté), նրա բառերն են։—«Մենք, շարունակեց նա, երբէք նպատակ չունենք լատինացնելու։ Ոչ մի արևելածէս կաթոլիկի չենք ընդունի լատին ծէսի մէջ, մինչև որ այն ծէսի գլխաւորը, այսինքն այս դէպքում հայ-կաթոլիկ եպիսկոպոսը կամ պատրիարքը իրանց հաւանութիւնը չը տան։—Բացառութիւն կարելի է անել միայն ծայրայեղ դէպքում»։ Կարդինալ Գոտին յայտնեց, թէ ինքը տեղեակ է Կովկասում տեղի ունեցած կաթոլիկների վէճերին։ Ընդհակառակն, ասաց, եթէ լատին ծէսն ընդունած որ և է ոչ լատին անձ կամ հասարակութիւն ցանկանայ վերադառնալ իր ազգային ծէսին, ամենամեծ դիւրութիւն կը տրվի նրան։ Կարդինալը ինձ զանազան օրինակներ բերեց այդ տեսակ վէճերի և դէպքերի, Գալիցիայի, Ունգարիայի և Բալկանեան կաթոլիկներից, որոնց մէջ նոյնպէս գոյութիւն ունեն լատինածէսի և ազգային ծէսի վէճեր։—Ամեն անգամ, որ խնդիրը ներկայանայ Հռոմի Աթոռին, մենք կը պաշտպանենք արևելեան ծէսը, ասաց նա։

Մի քանի մասնաւոր խնդիրների մասին խօսելուց յետոյ, ես վերկացայ հրաժեշտ առնելու և կարդինալը՝ հարկ համարեց առանձին շնորհակալութիւն յայտնել ինձ իմ այցելութեան և տուածս բացատրութիւնների համար։ Այդտեղ ինքնաբերաբար վսեմափառ կարդինալը հարկ համարեց հետևեալ յայտարարութիւնն անել։ «Գուցէ գիտէք, ասաց նա, որ անցեալ տարի Պրոպագանդայի տպարանից հրատարակվել է մի բրօշիւր, առանց մեր գիտութեան։—Այո, գիտեմ, պատասխանեցի, տգեղ բան էր։—Ճիշդ է, ասաց նա, շատ տգեղ էր։ Ապահով եղէք, որ այդ բրօշիւրը տպվել է առանց մեր գիտութեան, հետևաբար պէտք չէ ենթադրել, թէ մենք համամիտ ենք նրա բովանդակութեան։ Ես, շարունակեց նա, ամենախիստ յանդիմանութիւն ուղղեցի տպարանի կառավարչին և հրամայեցի, որ անմիջապէս բոլոր տպված օրինակները գրաւվեն և բաց չը թողվեն։—Ես շնորհակալ եղայ կարդինալ Գոտիից իր բացարձակ համակրութեան համար դէպի հայ-կաթոլիկները։ Խնդիրը ահա ինչումն էր։ Հռոմում գտնվող մի քահանայ, Թամարաշվիլի կամ Tamaranti, ինչպէս գրում է նա, մեր հարցի արծարծման տաք ժամանակ, ծածուկ տպել է տուել մի բրօշիւր Պրոպագանդայի տպարանում, որտեղ զանազան տեսակ զրպարտութիւններ էր բարդում ընդհանրապէս կաթոլիկ հայերի և մասնաւորապէս Մխիթարեանների դէմ։ Այսպիսի մի բրօշիւրի հրատարակութիւնը Պրոպագանդայի տպարանից՝ նշանակում էր թէ Պրոպագանդան հաւանութիւն էր տալիս բրօշիւրի մտքին և ահա Պրոպագանդայի նախագահը ինձ ուղղած իր այդ յայտարարութեամբ բացարձակապէս դատապարտում էր այդ հրատարակութեան ընթացքը։ Պրոպագանդայի նախագահը քաղաքավարութեամբ մինչև դուռը առաջնորդեց մեզ և մենք գուրս եկանք իր սենեակից, մտանք կարդինալական խորհրդարանը և մի քանի վայրկեան յետոյ հեռացանք Պրոպագանդայից։

(Կը շարունակվի)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

9 յուլիսի

ԲԵՐԼԻՆ։ («Վոլֆի գործ.»)։ Ռուսաց կառավարութիւնը յայտնեց, որ արդէն ուղարկված է «Սկանդիա» նաւը ազատելու հրամանը։

ՍՈՒԷՑ։ («Ռէյտէր»)։ Ռուսաց հիւպատոսը բանակցութիւններ է վարում խէդիվիալ ընկերութեան հետ շոգենաւ վարձելու մասին կառավարչական հեռագիրները կատաւոր նաւատորմի նաւերին հասցնելու համար։

ԼՕՆԴՕՆ։ («Ռէյտէր»)։ Քաղաքը սրտակից ողջերթ է սարքում Հեռաւոր Արևելք գնացող 10-րդ արտիլէրիական բրիգադայի բատարէաներին։ Ի պատիւ ուղևորվողների կայացաւ հանդիսաւոր ճաշ, ներկայութեամբ նահանգապետի, տեղական զինուորական և քաղաքացիական իշխանութիւնների ու քաղաքի ներկայացուցիչների։

ՉԻՑՈՒ։ Նիւ-Զժուանից եղած գերմանական շոգենաւից հաղորդում են, որ եապօնական 4 ականանաւեր շոգենաւի ընտութիւնը կատարեցին և բաց թողեցին նրան, իսկ յետոյ կրակ բացին արագաձիգ թնդանօթներից։

ՏԵԱՆՑԶԻՆ։ Ասում են, որ գենեռալ-ադիւտանտ Կուրոպատկինի հրամանով, ռուսները յուլիսի 11-ին սկսեցին մաքրել Նիւ-Զժուանը։ Հաղորդում են, որ ռուսաց երկաթուղիական կայարանը այրվում էր առաւօտեան։

ՍՈՒԷՑ։ Բռնված անգլիական «Արդօվա» շոգենաւը եկաւ այստեղ ռուսաց զինուորական դրօշակի տակ ռուսաց կօմանդայով։ Նա գնում է Ռուսաստան։ Անգլիական «Վէնուս» կրէյսերը կանգնեց «Արդօվայի» կողքին։

ԻՕԿՕՀԱՄԱ։ Յուլիսի 11-ին Իդզուի մօտ Վլադիվոստոկեան էսկադրան ջրասոյզ արեց բրիտանական «Նայտ Կօմանտէր» շոգենաւը, որը գալիս էր Նիւ-Եօրկից։ Կօմանդան նախապէս տարվեց «Տօյնան» շոգենաւի վրա, որը յուլիսի 12-ին եկել էր Եօկօհամա։ Ռուսները բռնեցին նոյնպէս Գերմանական շոգենաւը, ըստ ամենայն հաւանականութեան «Արաբիա», ալիւրի բեռնով և բրիտանական մի շոգենաւ, որի անունը անյայտ է։ Այդ նաւերը ուղարկված են Վլադիվոստոկ։

ՏՕԿԻՕ։ Ջրասոյզ արված «Նայտ Կօմանտէր» շոգենաւը դուրս եկաւ Նիւ-Եօրկից յունիսի 17-ին դէպի Մանիլլա և յունիսի 28-ին Շանգհայից գնում էր Եօկօհամա սովորական բեռնով։ Եւրոպական ճանապարհորդներին ռուսները իրանց մօտ թողեցին։ «Տօյնան» շոգենաւով եկածները հաղորդում են, որ ռուսները ջրասոյզ արեցին նոյնպէս եապօնական երկու շխունա։

Կ. ՊՕԼԻՍ (Ռէյտէր)։ Անգլիան եռանդուն առաջադրութիւններ արեց Բ. Դրան, բողոքելով Պարիզի և Բերլինի դաշնագիրները խախտելու դէմ և որ և է թոյլատրութեան դէմ, որ Բ. Դուռը կարող էր տալ ապագայում ռուսական կամաւոր նաւատորմի կրէյսէրներին անցնել Դարդանելով։

ՏԵԱՆՑԶԻՆ (Ռէյտէր)։ Եապօնացիները դեռ ևս չեն մտել Նիւ-Զժուան։ Ռուսաց քաղաքացիական իշխանութիւնները սկսեցին քանդել ռուսաց վարչական շինութիւնները։

ԹԱՒՐԻԶ։ Այստեղ դեռ խօլերա չը կայ։ Շատ հայեր ուղարկում են ընտանիքները քաղաքից դուրս։

ԲԱԳՈՒ։ Թէհրանից «Каспій»-ի ստացած տեղեկութիւնների համեմատ, խօլերան այնտեղ տարածված է Թէհրանի երկու թաղերում։ Զոհերի թիւը օրէց օր պակասում է։ Ոչ մի դէպք չը կար ոչ Ռէշտում, ոչ Թաւրիզում։ Կարանտինը Զուլֆայում վերացված է։

ՏՕԿԻՕ։ Յուլիսի 10-ին Սէուլի եապօնական դեսպանին կօրէական կայսրը ունկնդրութեան ընդունեց, որի ժամանակ քննվում էր վարձատրութեան հարցը կօրէական երկիրը աւերելու համար պատերազմի պատճառով։ Եապօնական ժանդարմերիան յուլիսի 10-ին ցրվել է Եապօնիայի դէմ թշնամաբար տրամադրված ժողովը, որին մասնակցում էին 1500 կօրէացիներ։

ԿԱՐԿԱՍՈՆ։ Ի պատիւ կօմբի և Անդրէի տուած հանդիսաւոր ճաշի ժամանակ, մինիստր նախագահը մի ճառ արտասանեց, որի մէջ արդարացնում էր ներքին քաղաքանութիւնը։ Ապա ճառի շարունակութեան մէջ Կօմբ խօսեց նոյնպէս արտաքին քաղաքականութեան մասին և շեշտեց ներկայ կաբինէտի մեծ ծառայութիւնները այդ ասպարէզի վրա։ «Մինիստրութեանը,—ասեց Կօմբ,—պարտական են, որ կապվեց առաջին դաշնագիրը միջնորդ դատարանի մասին և վերացվեցին վաղուցվան և նոր վիճելի հարցերը Անգլիայի հետ։ Մեր դաշնակից Ռուսաստանը կատարելապէս վստահ լինելով, որ անսասան են մեզ նրա հետ կապող փոխադարձ յարաբերութիւնները, առաջին պետութիւնն էր, որ ուրախութեամբ ողջունեց մեր ձգտումներին՝ բարեկամանալու ուրիշ պետութիւնների հետ։ Մինիստր-նախագահը շեշտեց, որ նոր համաձայնութեան նպատակն է պաշտպանել ընդհանուր խաղաղութիւնը, որի պահպանումը Ֆրանսիայի առաջին հոգսը և հաստատ որոշումն է։

13 յուլիսի

ՄՈՒԿԴԷՆ։ Լուրերին նայելով, եապօնացիների փոքր զօրաբաժիններ շարժվում են դէպի Բէնսիխու, 60 վերստ դէպի արևելք Անտայ կայարանից, և դէպի Սինզինտին։ Այդ լուրը, եթէ ճշդվի, ցոյց է տալիս, որ եապօնացիները ձգտում են անցնել Լեաօհանի միւս կողմը Մուկդէնի ուղղութեամբ։—Այս լրագիրս անցաւ դէպի հիւսիս Թագուհու Կայսրուհու սանիտարական գնացքը։ Նրա մէջ կան յուլիսի 11-ին Դաշիչաօի մօտ 314 վիրաւորվածներ։ Գնացքը ուղարկելու վայրկեանին կռիւը շարունակվում էր։ Մասնակցողների պատմածների համեմատ, յուլիսի 11-ի կռիւը Դաշիչաօի մօտ սկսվեց առաւօտեան 6 ժամին և շարունակվեց մինչև գիշերվայ 11 ժամը։ Մեր զօրքերը պահեցին դիրքերը։ Դաշիչաօից 10 վերստ դէպի հարաւ կռիւը արտիլէրիական էր։ Հիմք կայ ենթադրելու, որ այսօր շարունակվող կռիւ միայն նախապատրաստութիւն էր։ Հետևանքը առ այժմ յայտնի չէ։

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ։ Քաղաքը առողջացնելու և տարափոխիկ հիւանդութիւնների դէմ կռուելու միջոցներ են ձեռք առնում։

ՏՕԿԻՕ («Ռէյտէր»)։ Վլադիվոստոկեան էսկադրան նկատվել է Կացիրայից դէպի արևելք։ Նա ուղևորվում է դէպի արևելք։

ԵՕԿԱՀԱՄԱ. («Ռէյտէր»)։ Անգլիական «Toinan» շոգենաւի օֆիցէրները, որը այստեղ է բերել «Նայտ Կօմանդէրի» ծառայողներին, յայտնեցին, որ ռուսական հրամանատարը 10 բոպէ տուեց ծառայողներին ռուսների ջրասոյզ արած նաւը թողնելու համար։

ՆԻՒ-ԶԺՈՒԱՆ։ («Ռէյտէր»)։ Կատաղի կռիւից յետոյ, որ շարունակվեց 14 ժամ մեծ կորուստներով երկու կողմից էլ, հնարաւորութիւն չը կար պահել դիրքը։ Ռուսները պէտք է այժմ յետ քաշվեն մինչև Խայչէն։

ՇԱՆԳՀԱՅ։ («Ռէյտէր»)։ «Նայտ Կօմանդէրի» ծառայողներից միայն հնդիկ նաւատները բերված են Եօկօհամա։ Եւրոպացիները կալանաւորված են։

ՀԱՄԲՈՒՐԳ։ («Վոլֆի գործ.»)։ «America Linia» շոգենաւային ընկերութեան ասելով, ձերբակալված «Արաբիա» շոգենաւը թէև այդ գծի սեփականութիւնն է կազմում և շրջում է գերմանական դրօշակի տակ, բայց ահա արդէն մի քանի տարի է, որ վարձված է ամերիկական ընկերութեան կողմից, որը այդ պատճառով էլ պատասխանատու է բեռի համար և որը պարտաւոր է Ռուսաստանին և Եապօնիային ռազմամթերքներ չը հայթայթել։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ («Ռէյտէր»)։ Կորական կերպով յայտարարում են, որ «Նայտ Կօմանդէրի» վրա զինուորական կօնտրաբանդ չը կար։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ («Ռէյտ. գործակալ.»)։ Ցայտնի դարձաւ, որ «Արդօվա» նաւի վրա եղել է հիւսիս-ամերիկական Միացեալ-Նահանգներին պատկանող՝ մեծ քանակութեամբ ռազմամթերք և այդ ռազմամթերքը, որի մէջ նաև 250 տօնն վառօդ, ուղարկվելիս է եղել Ֆիլիպպեան կղզիները։ Կարծում են, որ արտաքին գործերի մինիստրութիւնը «Նայտ Կօմանդէր» նաւի գործը կը յանձնէ վճռելու Անգլիային։

ՍՈՒԷՑ։ «Արդօվա» նաւը ազատված է։ Օֆիցէրները և նաւաստիները ապ իջան։

ՊՕՐՏ-ՍԱՅԻԴ։ «Սկանդիա» շոգենաւը վերսկսեց իր կանոնաւոր նաւարկութիւնը և մբտաւ Ջրանցքը։

ՄՈՒԿԴԷՆ։ Յուլիսի 11-ին Դաշիչաօյի մօտ տեղի ունեցած թնդանօթային կռիւ մէջ մեր կողմից մասնակցում էին 100 թնդանօթներ։ Կրակը շատ աջող էր և հակառակորդին լուրջ վնասներ հասցրեց. ջարդված են շատ թնդանօթներ և ռմբային արկղներ։ Եապօնացիները փորձեցին յարձակումն գործել զօրքի զետեղման կենտրօնի վրա, բայց յետ մղվեցին։ Մեր զօրքերին հրամայվեց նահանջել և գրաւել այն բարձրութիւնները, որոնք գտնվում են 7 վերստ հիւսիս Դաշիչաօից. նահանջը կատարվեց կատարեալ կարգապահութեամբ։ Մեր կորուստները յուլիսի 11-ին 50-ից աւելի չեն։

ԼՕՆԴՕՆ (Ռէյտէր)։ «Նայտ Կօմանդէր» շոգենաւի ընկղմումը առաջացրեց զօրեղ յուզում։ «Մօրնինգ Պօստն» ասում է. «Առևտրական

նաև ընկղմել առանց նախապէս մաքսանենգութեան դէմ դատարանի ենթարկելու, առանց ձևականութիւնների, հանդիսանում է արդէն իբրև պատերազմական գործողութիւն։ Մենք լսել ենք, որ մանր պետութիւնները երբեմն ստիպված են տանել անկանոնութիւններ երկու հզօր պետութիւնների իրար հետ պատերազմելու ժամանակ, բայց մենք չը գիտէինք, որ Անգլիան պատկանում է հինգերորդ կարգի պետութիւններին, չունի ծովային ուժեր և վախենում է ռուսաց Վլադիվոստոկեան էսկադրայից»։—«Ստանդարտն» ասում է. «Այդ դէպքը բոլորովին արտակարգ է և ի հարկէ նրան բաց չեն թողնի առանց ամենալուրջ հաւաճառութիւնների և փաստերի լիակատար վարձատրութիւն պահանջելու։ Չէզոք նաւերն ընկղմել և այրել—կը նշանակէ թոյլատրել մի արտակարգ, անթոյլատրելի միջնադէպ։ Վերջում «Ստանդարտն» ասում է, որ գործերի դրութիւնը, դժբաղդաբար, չափազանց լուրջ է երևում»։—«Դէյլի Քրօնիկլը» ասում է. «Բալֆուրի նկատողութիւնից եզրակացնում ենք, որ ռուս կառավարութեան հետ բանակցութիւնները դեռ բոլորովին վերջացած չեն և որ մի քանի դժուար հարցեր դեռ ևս վճռված չեն, բայց մենք յոյս ունենք լսելու, որ արտաքին գործերի մինիստրը բանակցութիւններ է առնում հարցի մասին ընդհանուր ձևով։ Հաւանօրէն այդ հանդամանքը հանդիսանում է իբր պատճառ դանդաղացման»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ՀԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ականջին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժական։
Ջ. Ի. ԲԱՇԱՆՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ա. ԹՈՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Պ. ԿՈՐԱՊԵՏՅԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. Սօլոզով ատամնաբույժ. 9—11 ժ.
ԵՐԵԿՈՅՆԵՐԸ
Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.
Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), ներքին և վեներական հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՀԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ա. ԹՈՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Վճարը 50 կ. հիւանդները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ա. ՌՈՎՆԻՑԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ

ԲԺՇԿԱՊԵՏ
Գր. Տէր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւնների. ունի բէնտգէնեան կաբինէտ. 154. Միքայէլեան պրոսպէկտ, տելէֆոն 825.
(շ. ե. հ. չ.) 59—105

ԲԺԻՇԿ
Գր. Մակարեան
ընդունում է հիւանդներին—ներքին և երեխայոց հիւանդութիւնների առաւօտեան ժամի 7½—8½, երեկոյեան 5—7. Միքայէլեան փող., № 134, Վետցելի հիւրանոցի դիմաց. հեռախօս № 907։ (ե. շ.) 6—6

Լոյս տեսաւ
ՍՕՆԱՅԻ ՆԾԱՆԴՐԻՔԸ
Վոդեվիլ 1 գործ. հեղ. Ց. Նապետանի
Գինն է 15 կոպ.
Դիմել Թիֆլիս «Գուտտենբերգ» և միւս գրավաճառներին։ Հեղինակին դիմողները կունենան մեծ զիջում.—Հալաբար, Լազարևսկայա, № 49։ 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Բժշկ. Բ. Նաւասարդեան
տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՕՎ Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ռ. կ. ե. հ.) 38—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փողոց № 8։ (ե.ռ.) 1—100

Լոյս տեսաւ
ԳԷՈՐԳ ՄԱՂԱԲԵԱՆԻ
ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ և ՀԱՄԱՐԱԿՈՒԹԻՒՆ
12 պատկերներով
ԳԻՆՆ Է 25 ԿՈՊԷԿ
Գուժարով գնողների համար առանձին զիջում։ Ցանկացողները թող դիմեն՝ Тифлисъ Армян. базаръ гост. дв. Манташева № 30, М. Магакьяну կամ Թիֆլիսի գրախանութներին։ Ծախվում է նոյն տեղերում հեղինակի «Մայր և երեխայ» գիրքը, գինն է 40 կ.։ (շ. չ.) 6—10

Թաւրիզի Էլիաւա թաղի Հայկազեան և Թատրեան երկսեռ դպրոցների համար հարկաւոր է տեսուչ՝ հոգևորականութեամբ։ Պայմանների մասին զիմումներ պէտք է անել հետևեալ հասցէով. Tauris (Perse), Prélature Arménienne.
3—7 (հ. ռ. չ.) Հոգաբարձութիւն

Կենտրոնական
գրավաճառանոցումը, Թիֆլիս, վաճառվում են հետևեալ հաղորդիւտ հրատարակութիւնները.
«Փորձ» գրական հանդէսի բոլոր 4½ շրջանները 30 ր., առանձին ա. տ. 15 ր., հետևեալ 3½ տ.—15 ր.։
«Կռունկ» 4 տարվա 7 ր., զանազան տարիների առանձին հատորներ 1 ր. 50 կ.։
«Արձագանք» զանազան ամբողջ տարիներ։
(չ.) 3—10

ԿՐՕՆԻ ԴԱՄԱԳՐԵՐ
Աշակերտաց համար

		Ր.	Կ.	
1.	Դասատուր կրօնի I տարի	—	25	25% զ.
2.	» » II »	—	20	
3.	» » III »	—	30	
4.	Հին-ուխտ (ընդարձակ) .	—	45	30% զեղչ
5.	» (համառօտ) .	—	35	
6.	Նոր-ուխտ . . .	—	40	
7.	Գործք առաքելոց . .	—	40	
	Ուսուցչաց համար			
8.	Ուղեցոյց (մեթոդիկայ) հին-ուխտի . . .	1	75	
9.	Ուղեցոյց (մեթոդիկայ) նոր-ուխտի . . .	2	5	33% զեղչ
10.	Ուսուցումն քրիստոնէական կրօնի Դ. . .	1	50	
11.	Ուսուցումն քրիստոնէական կրօնի Ե. . .	—	50	

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.
1) Тифлисъ, священнику С. Саакянцъ, Коммерческое училище.
2) » Книжный магазинъ «Гуттенбергъ»
3) » » «Центральный».

Դասագրքերիս պահեստը ամառս գտնվում է պ. Ալէքսանդր Ամիրաղեանցի մօտ (Карвансарай Тамамшева мануфактурный магазинъ А. Амирагова).
Ցանկացողները նրանից ևս կարող են պահանջ անել։
Սահակ քահ. Սահակեանց
յ. ա. օ. յլ.—օ. օր-մէջ ս. ա. օ. 26—66

Լոյս տեսաւ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Հատոր առաջին. 1865—1871.
ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ.
Առաջին հատորի մէջ զետեղված են այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Այդ յօդուածները վերաբերում են 1865—1871 թուականների շրջանին և տպված են եղել մասամբ «Մեղու Հայաստանի» լրագրում, իսկ մասամբ «Հայկական Աշխարհ» ամսագրում։
Դիմել «Գուտտենբերգ» գրախանութը։ 3—25

Լոյս տեսաւ
Հ. ԱՒԱՔԵԼԵԱՆԻ
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
№ 6 գիրքը
«Անգլիայի քաղաքական եւ հասարակական կեանքը»։
Գինն է 15 կոպէկ։
Մամուլի տակ է
№ 5 գիրքը—ԼԷՕԻ «Հայկական Տպագրութիւնը», հատոր առաջին, փոփոխած և լրացրած։
№ 4-ը լինելու է «Հանրագիտական բառարանը»։
Դիմել գրավաճառներին, իսկ մեծ քանակութեան համար հրատարակչին։

ՔԱՂԱՔԱՑԻՆ
գործադիր-սանիտարական յանձնաժողովը
Պատիւ ունի խնդրելու Թիֆլիսի պ.պ. բնակիչներին՝ քաղաքի առողջապահիկ վիճակի շահերի տեսակէտից, հաղորդելու իրան այն բոլոր սանիտարական զանցառութիւնների և պայմանների մասին, որոնք պահանջում են անմիջական վերացում։ Այդ տեսակ ամեն մի հաղորդած տեղեկութիւն կընդունվի շնորհակալութեամբ և դրանցից ամեն մէկի առիթով ձեռք կառնվեն ամեն տեսակ հնարաւոր միջոցներ։
Խնդրվում է տեղեկութիւններն ուղարկել գործադիր-սանիտարական յանձնաժողովին, Քաղաքային Վարչութեան շէնքում։
(չ. ռ.) 1—2

Լոյս տեսաւ
ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱԲԱՅԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(101 երես)
Գինն է 50 կոպէկ։
Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի նոյն հեղինակի
ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀ
Վերնագրով ողբերգութիւնը։
Դիմել հայ գրավաճառներին և հեղինակին՝ (օգոստոսից յետոյ) հետևեալ հասցէով. Екатеринодаръ, Куб. обл. Учителю Екатеринодарскаго арм. 2-хъ клас. училища, Хачатуру Бабаянцу. 1—5

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԳԻՏ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Баку, Пречестная, домъ Теръ-Ованесова)
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական, եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագիր). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։ Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Հ. Հ.) 5—30

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Тифлисъ, Сололаки, Лермонтовская ул., № 9)
Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Աւանդվելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական տնտեսութիւն. 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուաբանութիւն համրիչի վրա. 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։
Չրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա։ Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսերի հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմոնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսերի հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (Կ. Հ.) 8—25

Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնագործութեան ընկերութեան
ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵՒ, ԿԱՆԱՆՑ, ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԿՕՇԻԿՆԵՐ,
նոյնպէս և սկօրօխոդներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդրկովկասի միւս քաղաքներում ԱՄԵՆԱԼԱՒ վաճառատներում։
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ.
Խնդրվում է ուշք դարձնել ֆաբրիկայի նշանի վրա։

«ԼԷՕՊՕԼԴ ՆԷՅՇԷԼԼԷՐ»
Առևտրական տան պահեստում կայ ընտրութեան համար մեծ քանակութեամբ ռուսական եւ արտասահմանեան արդիւնագործութեան
ԿՈՂՈՒԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ
Տէլէֆոն № 546. 16—100 Երևանեան հրապարակի վրա։

Дозволено Цензурою. Тифлисъ, 13-го іюля 1904 г. Տպարան «ՀԵՐՄԵՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81